



ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ԵԿԵՂԵՑԻ Հովիւ՝ Վեր. Տիգրան Ծանլեան

Տարի 10, Թիւ 106 Յունիս 2002

ՉՈՐՍ ԿՈՐՍՈՒԱԾՆԵՐԸ

«Ձեզի կ'ըսեմ որ այսպէս որսխտութիւն պիտի ըլլայ երկինքը մէկ մեղաւորի համար որ կ'ապաշխարէ, քան թէ ինքսուհինը արդարներու համար, որոնց ապաշխարութիւն պէտք չէ»: Ղուկ. 15:7

Ասիական Աստուածաշունչի ամենէն գեղեցիկ գլուխներէն մէկը 15րդ գլուխը:

Հետաքրքրական է սկիզբը. «Բոլոր մաքսատրները ու մեղաւորները անոր կը մօտենային իրմէ լսելու համար»:

Շատ բան կ'ըստի Քրիստոսի համար յիշեալ մէջբերումով: Նշանակութիւնը պարզ է, բոլոր անոնք որոնք ձախողեցան, գիտակցեցան թէ Քրիստոսի քով օգնութիւն կը գտնեն փոխան դատապարտութեան: Մաքսատրներն ու մեղաւորները ի յայտ բերին թէ ան «մեղաւորներու ընկերն է», թէ կը սիրէ անոնց հետ ուտել եւ իր ժամանակին մեծ մասը անոնց յատկացուց:

Տէրը ծանր խօսք ունէր հպարտ մարդոց, որոնք ինքնարդարացումի ետեւէ էին: Իսկ կորսուածներուն ազնուութեամբ մօտեցաւ, պատմելու չորս պատմութիւններ:

Ա. Չորս կերպեր կորսուելու —

1. Անհոգութիւն (ոչխարը) — Մէկ ոչխարը որ կորսուեցաւ, չար ոչխար մը չէր, ոչ ալ հօտի միւս ոչխարներէն անէի գէշ էր: Յաճախ կը հեռանար հօտէն, փնտռելով անէի լաւ մարգագէտիներու ու զովալ ջուրեր, ետքը երբ կը մթնանար, կ'անդրադառնար որ մինակ է:

Ժամանակի ընթացքին, կարեւորութիւն չտալով հովիւի կոչերուն, այս ոչխարը կորսուեցաւ:

Շատեր այս ձեռով է որ կը կորսուին. զբաղ կեանքի գործերով, կամաց-կամաց կը հեռանան Աստուծմէ, սակայն ճգնաժամի մը մէջ կը գիտակցին թէ մինակ են:

2. Անգործութիւն (դրամը) — Դրամը նոյնն էր կորսուելէ առաջ ու վերջ: Եթէ արծաթ էր պրիմի չվերածուեցաւ կորսուիլ չնշանակել որ այդ անձը արժէք կամ նկարագիր չունի: Դրամը գործածութենէ հեռու էր. ուստի կորսուեցաւ: Դրամը կրնայ ներկայացնել ծառայութիւն մը. երբ կը հեռանանք ծառայութենէ, շրջագայութենէ դուրս, կորսուած ենք:

3. Կամեցողութիւն (Որդին) — Այս փոքր որդին կորսուեցաւ, որովհետեւ ուզեց

կորստիլ: Անհկա լա զաւակ էր: Բայց չհնազանդեցաւ տան օրէնքներուն եւ սովորութիւններուն. միայն մտածեց պահուայ մը մասին, անտեսելով իր պարտականութիւնները ընտանիքին եւ ընկերութեան: Իր ազատութիւնը գործածելու եւ սպասուցելու ճամբուն մէջ մեղքին գերի եղաւ:

4. Գոռոզութիւն (Որդին) — Մ'ե՛ծ որդին խղճմտանքով, ազնիւ երիտասարդ մըն էր տունը մնաց ու կորսուեցաւ: Կորսուեցաւ իր փօր նպատակներէն որովհետեւ ինքնագոհ էր ու անհանդիպօժող:

Ոմանք կ'ըսեն թէ անասակը եթէ փօրը տեսնելէ առաջ եղբօրը տեսնէր հաւանաբար վերադառնար խոզերուն:

Բ. Չորս հետեւանքները —

Ոչխարը կորսուեցաւ, ոչ թէ որովհետեւ մորթուեցաւ, այլ որովհետեւ հովիւէն հետացաւ ու ինքզինք զտաւ անօգնական վիճակի մէջ:

Դրամը տակաւին ունէր իր արժէքը, տակաւին ունէր կայսրին պատկերը, բայց կորսուած ըլլալով, անգործածելի էր: Տակաւին իր տիրոջ սեփականութիւնն էր, առանց արժէքի:

Փոքր որդին ընտրեց հետանալ, ու անկումի մէջ էր: Մաքրու ու գեղեցիկ հագուած երիտասարդը հիմա ցնցոտիներու մէջ էր:

Մ'ե՛ծ որդին ուրախ չէր, իր հպարտութեամբ կորսնցուցած էր ուրախութիւն եւ ցնծութիւն, անձնակեղրոն կեանք մը ունէր:

Գ. Չորս փնտրտութիւններ —

Հաւանաբար ինքսուսինը ոչխարները բաւարարելու են հովիւին, բայց ոչ Քրիստոսի, ան մէկ ոչխարին տեսէն պիտի երթայ, մինչեւ գտնէ ու իր ուսերուն վրայ առնելով բերէ սպահովութեան:

Սուրբ Հոգին կ'ալէ մեր կեանքերը, վերցնելով մեղքի աղտոտութիւնը, մինչեւ որ գտնենք մեր անձերը, նման փայլուն ու թանկագին դրամի վերահաստատուած գործածութեան մէջ:

Երկնատր Հայրը միշտ առաջին քայլը կ'ստնէ: Մ'ենք կը սիրենք զինք, որովհետեւ առաջ ինք մեզ սիրեց:

Եկեղեցին ալ փնտրելու է. «Ինչպէս Հայրը զիս դրկեց եւ ալ ձեզ կը դրկեմ»: Ինչպէս որ Քրիստոս հոգիները փնտրելու տեսէն էր, մենք ալ դրկուած ենք նոյն նպատակին համար:

Հետեւաբար կրնաս կորսուած ըլլալ անհոգութեան, ծուլութեան կամ գոռոզութեան պատճառով. կրնաս վստահ ըլլալ որ Հայր մը կայ երկինքի մէջ սիրով լեցուն ու փրկիչ մը որ քեզի համար մտաւ ու Սուրբ Հոգի մը որ փնտրելով կը բերէ քեզ փօրի սպահովութեան:

ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒՆԻ ՀԵՏԵԻՆԱԼ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԸ

- | | |
|--------------------|---|
| Կիրակի - | Առաւօտեան 11-ին Պաշտամունք
Մանուկներու Կիրակնօրեայ |
| Երեքշաբթի - | Երեկոյեան 7-ին Սերտողութիւն |
| Հինգշաբթի - | 7-ին Երիտասարդաց Սերտողութիւն
8:30-ին Երգչախումբի Փորձ |
| Ուրբաթ - | Առաւօտեան 10:30-ին Քոյրերու Ժողով
7:30-ին Պատանեաց |
| Շաբաթ - | Ամէն Ամսուայ Վերջին Շաբաթը Երեկոյեան
7-ին Երիտասարդ Չոյգերու Ժողով |

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՏԷՐՈՋ ՓԱՌՔԻՆ ՀԱՄԱՐ

- Մայիս 2-ին երեկոյեան 7:30-ին Ամերիկայի ազգային աղօթքի օրուան աղթի տարբեր եկեղեցիներ միաստեղ եկած էին աղօթքի: Կարգ մը հովիւներ չկային, կարգ մը եկեղեցիներէ հաստացեալներ չկային. սակայն առիթ մըն էր միաստեղ աղօթքի: Աղօթեցինք ու մեկնեցանք: Աղօթեմք որ պարզ սովորութիւն մը չըլլայ:
- Մայիս 27-ին մեր եկեղեցական դաշտագնացութիւնն էր, Յիշատակի Օրուան աղթի: Առաստեան 10-էն սկսեալ համախմբուեցանք Սիւնար քաղաքի Վեթերաններու պահէն: Երգեցողութիւն, Աղօթք, Պատգամ, Շաշ, Խաղեր ու Խաղեր. փոքրերու եւ մեծերու: Լաւ կազմակերպուած էր: Մինչեւ իրկուան 7-ը տակսահն հոն էինք: Աստուծոյ փառք ըլլայ ամէն բանի համար: Ծնորհակալութիւն երիտասարդ Կարասպետեաններուն ու նաեւ Մաքրուհի քրոջ: Տէրը օրհնէ բոլոր ծառայողները:
- Եկեղեցաշէնքի մէկ մասը ընդարձակեցինք. ձայներիզներու արձանագրութեան տեղ ունենալու համար: Ապրիս Շորն եղբայր ամէն օր հոն է, ամէն օր կը հսկէ:
- Յովսի երրորդ շաբաթավերջին Եութայի Արարատ Աւետարանական եկեղեցիի համագումարն է: Մեր հովիւը հրաւիրուած է պատգամելու:
- Յովսի վերջաւորութեան կը ծրագրենք ունենալ մկրտութեան պաշտամունք մը: Արդեօք մկրտողներ կա՞ն:
- Աստուծոյ փառք կու տանք որ Ֆրէզնօի եկեղեցական կալուածի հարցը անելի ապահով վիճակի մը մէջ դրուած է շնորհիւ Անդրանիկ եւ Շորն եղբայրներու պջեղութեան եւ բանակցութիւններուն: Տէրը կամի նոր ժողով մը կ'ուզենք սկսիլ Ֆրէզնօի մէջ:
- Յունիս 27-30 Պատանի-Երիտասարդներու համագումարն է Քէմբ Արեւի մէջ ու պատգամաբերը՝ Վեր. Յովսէի Մաթոսեանն է. ճիշդ՝ Քրիստոնէական ան եւ հասունութիւն: Ամէն բան սահման կ'ընթանայ եւ կ'աղօթենք որ Աստուած օրհնէ իր ներկայութեամբ բոլորը թէ խօսող եւ թէ լսող:
- Աչքը լոյս Մանուկ եւ Ռուզաննա Առաքելեաններուն. Աստուած իրենց շնորհեց 4րդ թոննիկը՝ Յարութիւնը: Յատուկ շնորհատրութիւններ նորածին ծնողքին՝ Մարինէին եւ Յակոբին: Թող Աստուծոյ շնորհքովը մեծնայ ու առաջնորդուի հոգետր ճամբաներով:
- Ամերիկեան Մկրտական եկեղեցիները փաստօճով կը հասագոյն Ըրվայն քաղաքին մէջ Յունիս 28-29: Մեր եկեղեցին սլ հրաւիրած են. Տէրը կամի երգչախումբը Միհրան եղբօր առաջնորդութեամբ պիտի մասնակցի: Աղօթող ըլլանք որ միայն Տէրը փաստարուի այս հոգետր մշակութային փաստօճով:

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

- ◆ *Մեր դաստիարակութիւնը Տիրոջմէ նախապայման է մեր զաւակներուն լաւ դաստիարակութեան:*
- ◆ *Ամէն մէկ զաւակ յատուկ տեղ եւ սէր ունի հօրը մօտ:*
- ◆ *Մեր ծնողը սիրելու լաւագոյն կերպը, անոր հնազանդիլն է:*
- ◆ *Հայրեր երկրի վրայ մնանուելու են երկիւնքի Հօր:*
- ◆ *Եթէ Հայր Աստուած քեզ սիրէր, ինչպէս որ դուն կը սիրես զինք, արդիօք ո՞ր պիտի ըլլայիր:՞*

ԻՄ ՀԱՅՐԻԿԻՍ

Իմ հայրական սիրով բոված
Դարցա եւ մի բանաստեղծ
Չի տալիս ինց քուն ու դադար
Սրտիս անհուն խորքերին:

Մտածում եմ եւ շարունակ
Որ մի պայծառ չքնաղ օր.
Կհանդիպեմ եւ իրեն
Եվ կխոսենք շատ երկար:

Մեր անցած, դարցած,
Մեր լավ ու վատ վատ հուշերից
Որը կտա պայծառություն իմ մտքին
Հանգստություն սրտիս անհուն խորքերին:

Լուսինե Թոփանեան

Ո՛Վ ՀԻՍՈՒՍ

Որ երկնային փառքդ՝ մարդու մտքէն վեր է
Սուրբ սրտի սերդ՝ անխոսք, անպատմելի է
Կրած տառապանքդ՝ գերմարդկային է
Բերած փրկությունդ՝ վերին շնորք է:

Կատարած հաղթությունդ՝ միայն հիանալի է
Տված խաղաղությունդ՝ խաբուսիկ, անցողիկ չէ
Հայտնած խոստումդ՝ ինձ քեզ մոտ տանես
Մխիթարություն ու բալասան է:

Նարինե Սարգիսյան
Երեւան

Armenian Evangelical Brethren Church

3200 London St., Los Angeles, CA 90026

(213) 483-7265 / Fax (213) 483-7002

Internet: www.aebcm.org – E-mail: aebcministries@aol.com